

ՌՈՒՐԵՆ ԶԱՏՏԷՃԵԱՆ

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած. նայէ անգամ մը ինծի: Ի՞նչպէս կը տեսնես զիս, ի՞նչեր կը տեսնես իմ մէջ: Նայէ անգամ մը, որովհետեւ զիտեմ որ միայն Դուն ես որ կը տեսնես այն ինչ որ կայ մարդուս ներաշխարհին մէջ: Նայէ՛ անգամ մը ինծի: Ես հպարտօրէն կը բանամ ահա կուրծքս եւ կ'ուզեմ որ նայիս թէ ինչ կայ հոնկէ ներս: Ո՛չ թէ միայն հպարտօրէն, այլ նաեւ անվախօրէն: Այլ նաեւ ինքնավստահութեամբ: Որովհետեւ ես ոչի՛նչ ունիմ թաքցնելիք: Գիտեմ, արդէն ոչի՛նչ կրնամ թաքցնել Քեզմէ, Դուն արդէն ամէն ինչ կը տեսնես: Մինչդեռ զիտեմ նաեւ, որ եթէ սիրտս բանամ մարդոց, անոնք պիտի կարենան կասկածիլ ինձմէ, եւ ըսել. «Դուն ամէն ինչ ցոյց չես տար, դուն բաներ մըն ալ կը թաքցնես մեզմէ»: Որքան ալ մերկանամ մարդոց դիմաց, անոնք պիտի կարենան կարծել որ ես կը թաքցնեմ կարգ մը մեղքերս ու տգեղութիւններս: Մինչդեռ, Տէր Աստուած, Քեզի հետ չունիմ այդպիսի հարց մը: Դուն կրնաս նայիլ ինծի եւ մէկ անգամէն տեսնել ինչ որ կայ իմ մէջ: Որքան ալ հաստ հագուիմ, որքան ալ փետուրներով զարդարուիմ, որքան ալ զուարթ գոյներու ներկեմ մորթս, որքան ալ լալ ձեւացնեմ խնդալու փոխարէն, որքան ալ լռեմ կամ որքան ալ խօսիմ, որքան ալ աղօթեմ ամենագեղեցիկ բառերը ընտրելով, որքան ալ վախնամ կամ որքան ալ յոյսորտամ իմ ունեցած կամ չունեցած առաքինութիւններով, Դուն զիս կը տեսնես այնպէս, ինչպէս որ եմ: Հարց չկայ: Որքա՛ն հանգիստ եմ Քեզի հետ, Տէ՛ր Աստուած, ինչպիսի անդորրութիւն մը կը զգամ երբ Քեզի կը ներկայանամ ու կուրծքս բանալով կ'ըսեմ. Նայէ՛, Տէր, նայէ՛: Աշխարհի վրայ ո՛չ մէկ երաժիշտ կրցաւ ստեղծել հանդարտութեան այն երաժշտութիւնը, զոր կը լսեմ երբ կը խօսիմ Քեզի հետ: Կը տեսնես արդէն թէ ձեռքերս չեն դողար երբ կը խօսիմ Քեզի հետ, չեմ տոգունիւր երբ իմ տկար մարմնիս վրայ սեւեռուած կը զգամ նայուածքդ, երբեք ու երբեք չեմ սոսկար երբ կը զգամ որ Քու տաքուկ շունչը արդէն մտած է մարմնես ներս ու կը խուզարկէ իմ ներաշխարհս: Հանգիստ եմ, որովհետեւ միշտ ջանացի արժանի դառնալ Քու սիրոյն ու գնահատանքին, այն միակ սիրոյ ու գնահատանքին, որուն անկեղծութենէն չի կրնար կասկածիլ երկերեսներով ու շողորթոթներով շրջապատուած մարդ արարածը: Չեմ վախնար Քու դատաստանէդ, Տէր Աստուած, հակառակ որ գիտեմ թէ երբեմն մեղքեր ալ գործեցի ակամայ, երբեմն թերութիւններ ալ ունեցայ, երբեմն կաղացի: Չեմ վախնար դատաստանէդ, որովհետեւ Դուն զիտես կշիռի մէջ դնել ամէն ինչ եւ տեսնել թէ ինչն է որ ծանր կը կշռէ այդ կշիռին մէջ: Չեմ վախնար դատաստանէդ, որովհետեւ ես միշտ ուզեցի դառնալ մէկը Քու այն անհամար զաւակներէդ, որոնց դիմաց չես զոջացած զանոնք ստեղծած ըլլալուդ համար: Ով գիտէ որքան շատ են անոնք, Քու իշխանութեան հաւատարիմ քաղաքացիները, որոնք ստեղծուած ըլլալու պարգելը հացի սրբութեամբ դրին իրենց ճակտին վրայ եւ զայն բաժնեցին հազարաւոր մարդոց հետ, դարձեալ հացի սրբութեամբ: Ես, որ այնքան երկչոտ էի մարդոց դիմաց, այնքան

գլխիկոր ու անհամարձակ, այնքան վարանոտ ու թերահաւատ, հիմա քաջութիւնն ունիմ նայելու Քու աչքերուդ մէջ, համարձակ ու ինքնավստահ, գլուխս բարձր, հաւատքով լեցուն, որովհետեւ չեմ մոռնար երբեք որ միայն Քե՛զի էր որ կեանքիս հաշիւը կը ներկայացնէի ամէն իրիկուն եւ կը սպասէի որ վաւերացնէիր այդ հաշուետուութիւնը: Ամօթ չունիմ Քու դիմաց: Կրնամ պոռալ թոքերուս ամբողջ ուժովը: Ամօթ չունիմ: Ինչ փոյթ, եթէ այս երկրաւոր կեանքիս մէջ երբեմն պատահեցաւ որ կեղծ դատաւոր մը զիս մահուան դատապարտեց կարծելով որ կրնար զիս մահուան դատապարտել: Բոլոր այս կեղծ դատաւորները չեն գիտեր թէ ո՞վ է իրական դատաւորը: Ես միշտ քեզի հետ էի, կամ կը զգայի որ Դուն միշտ ինծի հետ էիր: Չեմ կրնար սխալած ըլլալ: Որովհետեւ բոլոր տեղատարափներէն վերջ անպայման Արեւ մը զրկեցիր ինծի: Ըսիր, նայէ՛, այս Արեւը ես եմ, անոր մէջէն է որ պիտի գտնես ապրելու ու գործելու երջանկութիւնը, նաեւ ուժը, նաեւ հաւատքը: Արեւը բոլոր մարդոց վրայ կը ծագի, բայց քիչեր միայն կը լուսաւորուին անոր լոյսով: Քիչեր միայն գիտեն թէ Արեւը ինչո՞ւ կը ծագի ամէն օր: Քիչեր միայն գիտեն որ Արեւը վարձատրութիւն մըն է: Քիչեր միայն Արեւը իրենց հետ կը կրեն, նոյնիսկ, երբ ան կը կորսուի հորիզոնին ետին: Քիչեր միայն զայն իրենց հետ անկողին կը տանին գիշերային անդորր քունի մը արժանանալու համար: Ես ամէն գիշեր անդորր քնացայ, Տէր Աստուած, եւ ատոր համար շնորհակալ եմ արդէն: Ես երբեք գիշերուան մէջ չարթնացայ մղձաւանջներէ տանջուած: Կամ եթէ պատահեցաւ որ արթնացայ, տեսայ որ կէս գիշերուան մէջ իսկ Արեւ կար սենեակիս մէջ: Եւ ատոր համար ալ շնորհակալ եմ արդէն: Եւ շնորհակալ մարդու հանգիստ սրտով է որ կը կրկնեմ ահաւասիկ. Տէր Աստուած, նայէ՛ անգամ մը ինծի եւ ըսէ թէ ի՞նչպէս կը տեսնես զիս, ի՞նչեր կը տեսնես իմ մէջ: Նայէ՛ անգամ մը, որովհետեւ գիտեմ որ միայն Դո՛ւն ես որ պիտի տեսնես այն ինչ որ իրապէս կայ մարդուս ներաշխարհին մէջ: Ես արդէն բացի կուրծքս, եւ ճակատաբաց կ'ուզեմ որ կրկին տեսնես թէ ի՞նչ կայ հոնկէ ներս: